ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/13

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 29.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն 29.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Արարատի մարզի «Մխչյան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում սննդամթերքը:

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի ունեցել 2018թ դեկտեմբերի 18-ին ժամը 12:30-ին:

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ–ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, այնուհետև հարցում է կատարվել ՀՀ ՊԵԿ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 10.01.2019թ. տրամադրված եզրակացության (այսուհետ՝ Եզրակացություն) համաձայն Ընկերությունը ունի 53.000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 24.01.2019թ.:

Ընկերության հայտը մերժվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընկերությունը հայտը ներյացնելիս առաջնոդվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունով, համաձայն որի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

Ընկերության կողմից ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերում են «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարներին, որոնց մասին Ընկերությունը հարկային մարմի կողմից որևէ իրազեկում չի ստացել և այդ տեղեկությունը կարող էր ձեռք բերել միայն Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Ընկերությունը գտնում է, որ պետք է վերականգնվի նրա հետագա մասնակցությունը գնման գործընթացին, քանի որ դրա դադարեցումը պայմանավորված է եղել հարկային մարմի կողմից իրազեկված չլինելու հանգամանքով:»:

«ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 23.01.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացած որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Հայկ Ղազարյանը:

2. <u>ՀՀ Արարատի մարզի «Մխչյան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 29.01.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ Արարատի մարզի «Մխչյան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

ՀՀ Արարատի մարզի «Մխչյան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՀՈԱԿ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 29.01.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.12.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 և 23.01.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, 18.12.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.01.2019թ. «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. տրված եզրակացությունը.

ՀՀ Արարատի մարզի «Մխչյան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը կազմել է՝ 8-րդ չափաբաժնի համար՝ 165.000 ՀՀ դրամ, 9-րդ չափաբաժնի համար՝ 120.000 ՀՀ դրամ, 11-րդ չափաբաժնի համար՝ 14.000 ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի համար՝ 112.500 ՀՀ դրամ, 14-րդ չափաբաժնի համար՝ 2500 ՀՀ դրամ, 15-րդ չափաբաժնի համար՝ 6000 ՀՀ դրամ, 16-րդ չափաբաժնի համար՝ 4000 ՀՀ դրամ, 19-րդ չափաբաժնի համար՝ 1700 ՀՀ դրամ, 20-րդ չափաբաժնի համար՝ 105.000 ՀՀ դրամ, 22-րդ չափաբաժնի համար՝ 80.000 ՀՀ դրամ, 24-րդ չափաբաժնի համար՝ 22.500 ՀՀ դրամ, 27-րդ չափաբաժնի համար՝ 7500 ՀՀ դրամ, 28-րդ չափաբաժնի համար՝ 31.500 ՀՀ դրամ, 33-րդ չափաբաժնի համար՝ 460.000 ՀՀ դրամ, 34-րդ չափաբաժնի համար՝ 15.000 ՀՀ դրամ, 35-րդ չափաբաժնի համար՝ 9200 ՀՀ դրամ, 36-րդ չափաբաժնի համար՝ 9600 ՀՀ դրամ, 37-րդ չափաբաժնի համար՝ 15.000

ՀՀ դրամ, 38-րդ չափաբաժնի համար՝ 9000 ՀՀ դրամ, 43-րդ չափաբաժնի համար՝ 40.000 ՀՀ դրամ, 45-րդ չափաբաժնի համար՝ 67.500 ՀՀ դրամ 46-րդ չափաբաժնի համար՝ 57.500 ՀՀ դրամ, 47-րդ չափաբաժնի համար՝ 117.000 ՀՀ դրամ, 48-րդ չափաբաժնի համար՝ 10.000 ՀՀ դրամ, 49-րդ չափաբաժնի համար՝ 4000 ՀՀ դրամ, 50-րդ չափաբաժնի համար՝ 6000 ՀՀ դրամ, 52-րդ չափաբաժնի համար՝ 3840 ՀՀ դրամ, 54-րդ չափաբաժնի համար՝ 6500 ՀՀ դրամ, 57-րդ չափաբաժնի համար՝ 12.600 ՀՀ դրամ, 59-րդ չափաբաժնի համար՝ 90.000 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 27.12.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 3-րդ կետով Ընթացակարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 52-րդ, 54-րդ, 57-րդ, 59-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին:

- 5-րդ կետով որոշել է հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասկնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 53.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 23.01.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության՝

- 2-րդ կետով արձանագրել է, որ «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 53.000 ՀՀ դրամ գումարի չափով, ինչը գերազանցում է

Հրավերի 1-ին մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

- 3-րդ կետով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը, որոշել է «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (18.12.2018թ.) ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 53.000 ՀՀ դրամ գումարի չափով: Ընկերությայն ներկայացուցիչը հայտնեց նաև, որ արձանագրված ժամկետանց պարտավորությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.01.2019թ. «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքի համաձայն՝ գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով: Ընկերությայն ներկայացուցիչը հավելեց նաև, որ «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (18.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, հետևաբար հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները և վստահ լինելով, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունի, Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 18.12.2018թ. դրությամբ քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.01.2019թ. «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը, որի համաձայն արձանագրված պարտավորությունը դրոշմանիշային վճարների գծով է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ

հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ Արարատի մարզի «Մխչյան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 2.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (18.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 53.000 ՀՀ դրամ:

- «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (18.12.2018թ.) դրությամբ

հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (18.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից 29.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

• 23.01.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում,

• պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

• «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ